

Ներդրումային ծրագիր-առաջարկ

ՀՀ Արմավիրի մարզ Նորավան համայնքում ֆերմերային տնտեսության ստեղծում

(Ներդրումային ծրագրի անվանումը)

Ամփոփ նկարագիր

Ամփոփ նկարագրել ներդրումային ծրագիր-առաջարկը, մասնավորապես՝ ներդրման ոլորտը, արտադրվող ապրանքը կամ տրամադրվող ծառայությունը, հիմնական սպառման շուկաները, ներդրման տեսակը (նոր ձեռնարկություն, գործող ձեռնարկության ընդլայնում, գործող ձեռնարկության վերապրոֆիլավորում), ներդրման համար նախատեսվող/նախընտրելի/ փարաձառյուցանքը. մարզը, համայնքը: Ներդրումային ծրագրի ընդհանուր արժեքը, այդ թվում մասնավոր ներդրողի, այլ ներդրողների (եթե կան) ներդրումը և ակնկալվող աջակցությունը:

ՀՀ Արմավիրի մարզի Նորավան համայնքը հարակից է բուսաբանական ինստիտուտին պարկանոց 51 հեկտար արդեն կտրված անտառաշերտի հողերին, որն ասֆիճանաբար վերածվում է անապատի, ուստի նպատակահարմար էմ գտնում այդ տարածքը վերականգնել և ստեղծել գյուղատնտեսական ֆերմերային տնտեսություն, որը զբաղվելու է հեղուկ մշակաբույսերի աճեցմամբ և վերամշակմամբ՝

1. Մոշ – վերամշակման և գինու արտադրության համար
2. Մալինա - վերամշակման և գինու արտադրության համար
3. Խաղող – ավանդական գինու սորտեր և չամիչի սորտեր
4. Ծիրան – չիր պատրաստելու համար
5. Գոջի – թարմ օգտագործման և չորացնելու (չիր) համար
6. Լոլիկ – տոմատի և հյութի արտադրության համար

Դրան զուգահեռ վերականգնել նաև անտառաշերտը՝ ըստ այդմ լուծելով բնապահպանական խնդիրներ և զուգահեռ փվյալ տարածքում զարգացնել գյուղական տուրիզմը:

Նախատեսվում է ֆերմերային տնտեսության հիմնման սկզբնական շրջանում ստեղծել 10-15 աշխատատեղ, որից հետո հետագայում հասցնել մինչև 25-ի: Նախատեսվում է ֆերմերային տնտեսության լիարժեք ձևավորվելուց հետո նյութական օգնություն տրամադրել համայնքի սոցիալապես անապահով ընտանիքներին:

Ներդրման ծրագրի ընդհանուր արժեքը կազմում է 120,000,000 ՀՀ դրամ, որից 50,000,000 պատրաստ ենք ներդրում կատարել մենք:

1. Ներդրման նկարագրություն

1.1. Ներդրման գումարը -120,000,000 ՀՀ դրամ

- Պահանջվող ամբողջ գումարը - 70,000,000 ՀՀ դրամ
- Այլ ներդրողներ - եթե կլինեն այլ ներդրողներ կարող են մասնակցել, եթե ոչ՝ այդ ներդրումները կկատարվեն սեփական միջոցներով՝ փուլային:

1.2. Նկարագրել ներդրման տեսակը՝ նոր ձեռնարկություն /start up/

Ստեղծել նոր ձեռնարկություն (ֆերմերային տնտեսություն), ՀՀ Արմավիրի մարզի Նորավան համայնքին կից բուսաբանական ինստիտուտին պարկանոց 51 հա ամայացված անապատացված տարածքի հիման վրա:

- Անվանումը - «Արտեմ Միքայելյան» Ա/Ձ
- Գտնվելու նախատեսված վայրը –ՀՀ Արմավիրի մարզ, Նորավան համայնք, 4 փող. 27 փուն

- Սեփականատեր (սեփականատերեր) -**Արտեմ Միքաելյան**
 - Կազմակերպա-իրավական փեսակը -**անհատ ձեռնարկատեր**
 - Տեղեկություններ ձեռնարկության փնտրելի վերաբերյալ՝ կոնտակտային փոփոխություններ -**Արթուր Միքաելյան, հեռ. +374 93260139, 55221000, էլ/հասցե. noravanigp@mail.ru**
 - Աշխատողների նախատեսվող թվաքանակ - **Ստեղծվող ֆերմերային փնտրությունում կաշխատեն 10, հետագայում՝ 25 աշխատող**
 - Ձեռնարկության նախագծային հզորություն:
- 1.3. Ապրանքի կամ ծառայության նկարագրություն

2. Շուկայի ուսումնասիրություն

Շուկայի մասնակցության իմ բաժնեմասի կանխատեսման համար հիմնականում հաշվի են առել.

- ՀՀ գործող մեծածախ շուկաները
- Իմ կողմից մշակվող և արտադրվող արտադրանքի փեսականին և որակը
- Հիմնական մրցակիցների նկատմամբ իմ գնային քաղաքականությունը
- Հետագայում պատրաստի ապրանքի արտահանումը արտերկիր:

3. Ձեռնարկության մարքեթինգային քաղաքականությունը

ա) Ռազմավարությունը.

- Արտադրվելու և վաճառքի է հանվելու որակյալ արտադրատեսակների՝ առանց քիմիական, գունային և համային հավելումների:
- Արտադրանքը լինելու է էկոլոգիապես մաքուր և հանդիսանալու է գրեթե օրգանիկ արտադրանք, քանի որ հումքը նույնպես էկոլոգիապես մաքուր է:

Օգտագործվող հումքի մշակման ընթացքում չեն օգտագործում քիմիական պարարտանյութեր, այլ միայն կենսահումուս (գոմաղբ):

բ) Տեսականին.

Տեսականին իրենից ներկայացնում է՝

1. Մոշի մուրաբա, կոմպոտ, գինի
2. Մալինայի մուրաբա, կոմպոտ, գինի
3. Խաղողի գինի, չամիչ
4. Ծիրանի չիր
5. Գոջու չիր
6. Լոլիկի փոմադ, հյութ
7. Ընկույզի մուրաբա

Տարածման ուղիները (գովազդ)

- Իրականացվում են հյուրասիրություններ և համարեսումներ
- Մշտական գովազդի փարածումը
- Մշտական հաճախորդների նկատմամբ կիրառել ակցիաներ
- Մշտական կապեր հաստատել ՀՀ և ՌԴ գտնվող գնորդների հետ

Գին

- Արտադրանքի գինը կլինի մատչելի շուկայականի համեմատ, քանի որ մենք նախընտրում ենք՝ քանակը՝ շատ, շահույթը՝ քիչ, ոչ թե՛ քանակը՝ քիչ, շահույթը՝ շատ:

Կապը հաճախորդների հետ

- Կապը հաճախորդների հետ կլինի մշտական՝ լսելով նրանց պահանջներն ու առաջարկություններն ապրանքի համար

Գործընթացի կազմակերպումը

- Արտադրական գործընթացը կազմակերպվելու է տեխնոլոգիաների և ժամանակի ճիշտ պահպանմամբ, որպեսզի պահպանվեն որակական բարձր հատկանիշները:

Ֆիզիկական միջավայրը

Արտադրանքը պահվելու է համապատասխան վայրում, որ համապատասխանում է իր պահպանման ռեժիմին:

4. Վաճառքի կանխատեսում

Վաճառքի ծավալները դրամական միավորներով 5 տարվա կտրվածքով կկազմի մոտավորապես 200 մլն ՀՀ դրամ:

5. Ձեռնարկության մարքեթինգային քաղաքականությունը

- Ակնկալվող շրջանառությունը 5 տարվա կտրվածքով կկազմի 150մլն ՀՀ դրամ, իսկ շահույթը կկազմի 40մլն ՀՀ դրամ
- Ներդրումների հեղադա ժամկետը 6 տարի:

6. Ծրագրի սոցիալ-տնտեսական ազդեցությունը

- Տվյալ ֆերմերային-գյուղատնտեսական մթերքի արտադրման և վերամշակման փնտրություն ստեղծելուց հետո կլավանա համայնքում սոցիալապես վատ ապրող ընտանիքների վիճակը, կստեղծվի լրացուցիչ 25 աշխատատեղ,
- Ֆերմերային փնտրության շահույթից գումար կհատկացվի համայնքում նոր նախատեսվող մանկապարտեզի կառուցման և հետագայում պահպանման համար,
- Իր ներդրումային բաժինը կունենա համայնքում իրականացվող և կատարվող աշխատանքների բնագավառում:

7. Պետությունից կամ այլ ներդրողից ակնկալվող օժանդակություն և պետություն-համայնք-մասնավոր հատված համագործակցություն

- Պետություն-համայնք-մասնավոր հատված համագործակցությամբ.
 1. 51հա բուսաբանական ինստիտուտին պատկանող նախկին անտառի տարածքը երկարաժամկետ կամ այլ կարգավիճակով տրամադրել ֆերմերային փնտրություն ստեղծելու և կազմակերպելու համար
 2. Ցածր տոկոսներով վարկերի տրամադրում. կա 50-50 ներդրումային մասնակցություն
 3. Երկարաժամկետ լիզինգ սարքավորումներ ձեռք բերելու համար: